

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի ստեղծարարական գազեր:

Հրատարակում է շաբաթը մեկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսայ դիմը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կող, գուրջը 3 ման. թ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ (ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթում հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Խմբագրատանից: Ծառայողների փախուստի վերաբերյալ: Նամակներ Երևանից և Նախիջևանից: Առևտրական աշխարհի կրկնաթիւ: Տարածի գործը կովկասում և վերջին ժամանակներում: Կովկասեան մարտատունը 1865 թին: Մեր հայտնիողները: Մանր տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Յայտարարութիւն:

ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻՑ:

«Վ աճառականի» գազեթի խմբագրութիւնը յայտնում է, որ դեռ էլի շարունակվում է էս գազեթին ստորագրվելը և բոլոր նոր ստորագրվողները կստանան գազեթը 1 №-ից սկսած:

Երբ որ կհատնին «Վ աճառականի» սակաւաթիւ մնացած 1-ն նուամերները, կյայտնենք մեր ապագայ ստորագրվողներին տեղեկենալու:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Պետերբուրգի Յիբուդի հոգաբարձու, կայսերական հասարակական ընթերցարանի ղեկավար և Անատոր, Տախի Սովետնիկ ԴԵԼԵԱՆԵԱՆՅԸ կարգվեցաւ Ռուսաց ազգային լուսաւորութեան միջնադրի ընկեր: Մի և նոյն ժամանակը դա մնում է Անատոր և ընթերցարանի ղեկավար:

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՐԵՒԱՆԻՑ ԵՒ ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ:

Երևանից մենք ստացանք նամակ, որի մէջ նկարագրել էր Մեծ Իշխան Փոխարքայի

հանդիսաւոր ընդունելը Երևանում: Նամակից երևում է որ ընդհանուր ուրախութիւն է էլի Երևանի ամեն հաւատի ժողովրդները մէջ Փոխարքայի գնալու պատճառով:

Նախիջևանից Պ. Աղէքսանդր Տէր-Գասպարեանցը զրուէ մեզ էս ամսի 13-ին նըմանապէս Փոխարքայի Մայիսի 4-ին Նախիջևան ընդունելու փառաւոր հանդէսը: Փոխարքային ընդունելիս Նախիջևանի քահանայ Տէր-Գասպարեանցը ճառ է ասել, որի մէջ յայտնել է Նախիջևանի բոլոր հայերի ուրախութիւնը Փաղաւոր Կայսր Աղէքսանդր Նիկողայեւիչի ազդրելի 4 վտանգից հրաշալի կերպով ազատվելու և Նորին Բարձրութիւն Փոխարքայի Հայաստանին այցելութիւն անելու պատճառով:

Էս նամակներիցը երևում է նմանապէս, որ Մեծ Իշխանը Եջմիածին էլ է էլի:

Թ Ի Յ Լ Ի Ս

Մայիսի 28-1866.

Մեր «Վ աճառականի» 1 №-ի մէջ Եւրոպայի փողի պակասութեան վրայ խօսելիս ասացինք, որ Եւրոպայի առևտուրին մնաս տվեց Ամերիկայի վերջին պատերազմը և թէ Եւրոպացուց ոսկին ու արծաթը մտաւ կիսալուսաւորված ազգերի ջէրը: Էն ժամանակը մեզ խօսելու առիթ տվեց Անգլիացուց բանկի դիսկոնտի բարձրացնելը մինչև 80%: Էն օրիցը շանց կաղաւ ահա երկր ամիս, որ էր բանկը առաջ աշխատեց ցածրացնել դիսկոնտը մինչև 60% և 70%, բայց մօտերումս նորից դարմանալի կերպով սկսեց բարձրացնել, էնպէս որ 7%, 80%, 90%, էսօր վեր-

ջապէս 10% հասաւ: Աւելորդ է ի հարկէ ասելը որ Անգլիացուց բանկի էսպիսի յորութիւնը ոչ միայն Անգլիացումը, այլ և ամբողջ աշխարհում ներդրածութիւն ունէ և հենց էդ իրողութիւնը առևտրական աշխարհի կրկնաթիւ հետևանքն է:

Էս վերջին ամիսը միմիայնից ասելի վատ համբաւներ էին հասնում ամենքիս: Ահա ձեռ վերջին նորութիւնները, որոնք առևտրական աշխարհին վերջին նեղութեան հասցրին:

«Անգլիացուց բանկը մէկ շաբաթ առաջ բարձրացուց դիսկոնտը մինչև 80%, երկու երկը օրից յետոյ շինեց 90% և էսօր հասցրուց մինչև 100%:

«Անգլիացուց, Ամերիկացուց, Հոլանդացուց և միւս կրկիւնների ամենաերեկելի բանկիներին մեծ մասը կուտարայան: Օվերսիս, Կարնէյ և ընկ. առևտրական տունը կուտարացաւ մօտ 100 միլիօն մանեթով: Ամեն օր մէկ քանի նշանաւոր բանկիրները կուտարանալու համբաւներ են բերում մեզ դաղեթները: Վաճառականները և փողատէրները ահ ու գողի մէջ են, ոչով չէ համարձակվում որ և իցէ դործի կաշկուռ: Բամբակի (Ամերիկայի միջին տեսակը) փունտը, որ էրեկ 22 պէնս էր, էսօր յանկարծ մօտ 12 պէնսի վրայ ցած ընկաւ: Ավերպուլումը (փութը մօտ 10 մանեթ): Շատ ֆարրիկաներ կողպվեցաւ:

Իտալիայի դրամաթղթերի սաւորներ թիչ կան, ունեցողները աշխատում են շուտով ծախել: Գերմանիացում, Աւստրիացում և Իտալիացում գործարանները կողպվում են պատերազմի համար պատրաստութիւնների պատճառով և հաղարածը մշակների անգործ են մնում: Աւստրիայի դրամաթղթերը սատարիկ ընկան, մէկ գուրդենանոց դրամաթղթի խորդա անելու համար 200% և ասելի ցած են դալին: Ռուս պօլուխմպերիալը Վեննայումը 9 մ. 40 կողպելով է դուրս գնում: Եւրոպայի բիրմաները սարսափի մէջ են: Ռուս-

սաց վեկտրի կուրը 1 օնգոնի վրայ 35 և 38 պէնսից հասաւ 26 պէնսին, Պարթի վըրայ 360 սանտիմից հասաւ մինչև 270 սանտիմին և դուցէ էլի պակաս: Առուտուրը դժուարանում է ամեն տեղ: Նմանը երբէք չէ էլած Ներսիսյանը: Անդլիայի պարլամէնտը առանձին նիստ ունենալով քննում է էդ բոլորի պատճառները և հրատարակում խօսք է տված 1 օնգոնի բիրժային ամեն միջոց դործ դնել էդ դժուարութիւնների առաջն առնելու համար: Մի և նոյն ժամանակը մեր տէրութիւնը մասնաւոր կերպով հրաւիրել է Պետերբուրգի և Մոսկովի բիրժայի վաճառականներին, մտածելու և հոգ տանելու, որ մեր կուրսերը բարձրանան և աւելի չվերջնանին: Ահա ձեզ կարճ հաշիւ Ներսիսյանի և մէկ մասով էլ մեր առուտուրի դրութիւնը: Ի՞նչ բան է էս: Ո՛ւր դնացին մեր փողերը, երբ է էլել Ներսիսյանի հասկի չղրութիւնը մէջ: Ի՞նչ է էս բոլորի պատճառը:

Յայտնի է, որ Ամերիկայի պատերազմից առաջ Ներսիսյան տարէնը մօտ 4 միլիօն և աւելի բամբակ դուրս բերելով էդ երկրից, տեղը տալիս էր արդէն իր գործարաններում պատրաստած ամեն կերպ ազնիւ, քնքոյշ և զեղեղիկ ապրանքներ, որոնցով հարուստ է Ներսիսյան և աղքատ է Ամերիկան: Էդպէս ահա Ամերիկան Ներսիսյան տալիս էր առանց մշակել բամբակ, ոսկի և այլն. Ներսիսյանը էդ բամբակից ու ոսկուց դանաղան զեղեղիկ ապրանքներ պատրաստելով նորից յետ էին դարձնում Ամերիկային մէկն երկու դնով: Դուրս էր դալիս, որ Ներսիսյանից փողը էլի մնում էր իրանց սնուցանելու: Ներսիսյանից գործարանները դնակէին, թէ ամեն տարի Ամերիկային ինչքան ապրանք է հարկաւոր—էնքան էլ պատրաստում էին և ուղարկում: Բայց Ամերիկայի պատերազմը լուհակեցաւ. բամբակ չբերին Ներսիսյան, ոսկի* չտալովեցաւ Ներսիսյան: Ներսիսյանի գործարանների մեծ մասը սկզբում կողմնակաւ: Մշակները և փողատէրները մնացին պարսպ: Հոգս տարան և հնարք դրան նորից բամբակ ձարելու: Փոխանակ Ամերիկայից բամբակ սպասելու, Ներսիսյանը սկսեցին ցանել ու դուրս բերել Նիդերլանդից, մեր կովկասի կողմերից, Հնդկաստանից, Բոմբայից, Չինաստանից, Պարսկաստանից և այլն: Մէկ խօսքով բացի Ամերիկան, որտեղ որ կարող էր բան-

րակ ցանկել, ցանկեցաւ: Ինչպէս մեր «Վաճառականի» 1 Ձ՞ ունի սապցինը էդ բոլորի հետեանքն էն էլաւ, որ Ներսիսյանը թէպէտ բամբակ ունեցան, բայց նրանց ոսկին մտուս վերոյիշեալ կիտարուսաւորված երկրացուց ջէրերը և նրանք աղահոսութեամբ ժողովելով ոսկին, փոխանակ առուտուրի մէջ գործ դնելու, թողեցին իրանց սննդումը գեանի տակ. վախենալով, որ սչով չդողանայ և չլուէ: Առաջին անգամն էր, որ Ներսիսյանը նոր զգացին սոսուս պոկասութիւնը, բայց առաջն առնելու հնարք չուէին:

Ամերիկայի պատերազմը դադարեցաւ. բոլոր վաճառականները և փողատէրները երեսին ծիծաղ եկաւ, ամենքը կարծեցին թէ այսուհետև նրանց գործերն էնպէս լաւ կերթայ, ինչպէս պատերազմից առաջ: Բայց շատ քիչին էին սպասում էդ եղբայրական արիւնահեղ պատերազմի էն դառը հետեանքներին, որ ահա էս վերջին ժամանակներումն երևեցան: Եդպէս ահա սոսուս Ասիացուց ձեռն անցկենալը առաջին և զլխաւոր պատճառն էլաւ Ներսիսյանից փողի պակասելունը:

Ներկորդ պատճառն էս էր: Երբ որ Ամերիկայի պատերազմը վերջացաւ. Ներսիսյանի ֆաբրիկաները կարծելով թէ Ամերիկայում սովորականից շատ ապրանք կարող է ծախվել, թանկ դնով առած բամբակից շատ մեծ գումարի ապրանք պատրաստեցին և տարան Ամերիկայ, բայց դրանց յոյսը չկատարվեցաւ, ապրանքների մեծ մասը մնաց անծախ, կամ էն դինը չավին, ինչ որ իրանց նստել էր և էդպէսով ահա Ներսիսյանի վաճառականները ստիպված էին մեծ վեճանքներ անելով ծախել իրանց ապրանքը ոչ թէ նաղղի, այլ բաւականին երկար ժամանակներով: Էդ պատճառով վաճառականների և ֆաբրիկաների մեծ մասը բաւական վնաս արաւ:

Երբորդ պատճառը: Բամբակի առուտուրը վերջին ժամանակներումը ոչ միայն Անդլիայում, այլ և ամեն երկիրներում, որոց հաշուումն է և մեր կովկասը, շատերին հարստացնելու և շատերին էլ աղքատացնելու միջոց դարձաւ: Բամբակի գները ամեն օր բարձրանալն ու ցածրանալը և էդ տեղից սպասած օգուտները վաճառականներին մեծ յոյսեր էին տալիս և հետեանքն էն էլաւ, որ ով որ փող ունէր լսարն էլ բամբակի առուտուրով սկսեցին պարսպել: Անդլիայում (մասնաւորաբար Վիլիերպուլում) ակցիաներով մեծ մեծ ընկերութիւններ կազմվեցան ահադին գումարներով: Ուղիղ վաճառականութիւնն անել դրանք չէին կարող և

անկարելի էր. ստիպված էին էն խաղով պարտղել, որին առում են բիրժայի Վալիուլայցիայ և որի դառը հետեանքները միշտ կրում են դրանով պարսպող վաճառականները: Էս վերջին ժամանակներում Անդլիայի, Ամերիկայի Միացած Նահանգների և Գերմանիայի մէջ առևտրական տներից և բանկիրներից շատ շատերը կուտարացան ահադին գումարներով և բոլորը բամբակի և թղթագրամների պատճառով: Ի հարկէ էդ հիմքերի վրայ կազմվող ընկերութիւնների ակցիաները (փոսթերը) բիրժայի վրայ ոչինչ հաստատ զին ունենալ չէին կարող, այլ մէկ տեսակ պարտնների և նոյն իսկ ընկերութիւնների անդամների համար գործիք էին դարձել բիրժայի խաղ խաղալու, գները վերջնամ ժամանակը արհեստական կերպով վերքաշելով և այլն և այլն: Մէկ թեթեւ հարուածք առևտրական աշխարհին բաւական էր, որ սնչւացնէր էդ բոլոր ընկերութիւնները:

Շէշվիցհոլտէյնի պատճառով էլած անբաւականութիւնները Աւստրիայի և Պրուսիայի մէջ վատ ներգործութիւն ունեցաւ Ներսիսյանը դրամաթղթերի, վեկտրիների և առճասարակ ամեն ապրանքների առուտուրի վրայ:

Էդ բոլոր պատճառները միասին անշուշտ կարող էին ամեն երկիրների առուտուրին հասցնել էն տեղը, որ շատ վաճառականներին համար հիմի առուտուր անելը անկարելի է: Օտար երկիրներից ապրանք առնել հիմի կնշանակէ միտա անել. որովհետև այժման կուրսով հարկւրին 20% ցած միմայն փողի բարաթն է նստում. 20% ցած փող բարաթ անողը, մէկ էլ 5% ուրիշ ծախս ունենալով, կարող է մկթէ 30% կամ 40% շահվել որ և իցէ ապրանքի առուտուրում: Ի՞նչպիսի դրութիւն է հիմի էն վաճառականների համար, որոնք սահմանից դուրս տալու փող ունին: Օտար երկրից ապրանք բերելու համար մեր կարծիքով փող ուղարկելը անկարելի է, մնում է միայն մեր երկրի չմշակած ապրանքները ուղարկել, տեղը նրանց ապրանքներ առնելու մտքով. բայց էդուրն էլ նոր արդիւք կայ, որովհետև թիֆլիսում 8 մանեթով բամբակ ծախող չկայ, և դաղեթները մեղ տեղեկացնում են, որ Վիլիերպուլումը 10 մանեթ էլ չեն տալիս փթին:

Տարակոյց չկայ, որ Ներսիսյան էդ դրութիւնը փոքր առ փոքր պէտք է լաւանայ, թէ ինչ հնարքներով—մենք չենք համարձակվում առաջուց դուշակել: Ներսիսյան ամեն փութնալ ու դաղեթ խօսեցաւ էդուր վրայ,

(*) Ամերիկայի պատերազմից առաջ կալիֆորնիայից և Աւստրիայից Ներսիսյան ոսկի էին բերում և ծախում իրեն ապրանք:

արմատի և ընկուղի ծառ . 100,926 մ.

Էս ապրանքները, ինչպէս երևում է ցույցակցը, աւելի է բերուել գէպի կովկաս բամբակեղէն և շաքար և աւելի է դուրս տարվել բուրդ և բամբակ : Բամբակեղէնը, զըլ-խանորատէս բնազը—կտանը աւելի է բերվում, որովհետև ածան լինելով աւելի էլ գործ է ածվում: Շաքարը աւելի է բերվել որովհետև պաշարը հասել էր: Կովկասի բուրդը լաւ է ծախվում Եւրոպայումը և էր պատճառով աւելի և աւելի ընդարձակվում է էր գործով սարապելը: Բամբակի գինը թէպէտ 1864 թւին Եւրոպայումը վեր ընկաւ, բայց 1865 թւին էլի վեր քաջվեցաւ և էր պատճառով աւելի էլ դուրս տարվեցաւ:

Եւրոպայիցը կովկասով արանդիտով անց է կացել Պարսկաստան 1865 թւին 19,674 հակն ապրանք—որի քաջն է 112,770 փութ:

Պարսկաստանից դուրս է տարած կովկասով Եւրոպայ արանդիտով 1865 թւին 3,048 հակն ապրանք—քաջն է 15,071 փութ:

Կովկասի մարսատուներ 1865 թւին արդիւնք է ունեցել ընդ ամենը—1,074 142 մ.

ՄԵՐ ՀԱՇՏՅՅՆՈՂՆԵՐԸ:

—Էլի ասում է, թէ չիմ կանայ, սո՛ չիս իմանում, ասում իմ էակնց արն:

—Աղա, չիմ կանայ, Աստուծ, իրդինք... ասում էր համարին լաց լինելով մէկ խնդճ վաճառական մէկ միջի մարդու առջևը որն որ աշխատում էր նրան դաւարարի հետ հաշտեցնելու:

—Տո՛ զըլխա մի ցաւեցի է, շատ իս խօսում: Կէս սահաթ ինճ հինգ թուանի համա կանդրեցրելիս ու խօսեցնում: Ամուխ չէ: Էրկու ամսայ վրայ կուտաս. իմանումիս Ասաց միջի մարդը ու քայլեցաւ:

—Շատ լաւ իս հրամանք անում, ասաց Տեսիկը վաղելով վաճառականը, ամա վերդանց ճարիմ. իր վաղին վուր չտամ ուրիս ամուխ չի ըլի: Էգէրի մէ վից ամիս չինիս վաղէն, քու հորուն մեռնիմ: Գըլխա քարը կուտամ ու վուց որ կուլի կու ճարիմ:

—Վից ամիս չէ, մէ տարի չիս ուղի: Վնց կուլի, սո, ինչիւր իս դուրս ամի: Հնց վաղէն վուր դայ արի ինճ մօղ, իս փուխ կուտամ հինգ թուամանը: Էդ հիշա: է Հիմի մէ բանը արծի:

—Գուն զիդիս, աղա ջան: Կէս բոպէկց յետց միջի մարդը զիտունանց ուրախ ուրախ յայանեց, որ հաշտեցրել է վլանին և վլանին իրանց յօժար կամքով:

ՄԱՍՆԱԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մինչև հիմի չլսած բարերաս ըուլթիւն: Մէկ Ամերիկացի հարուստ Պիբօզի անունով մօտիկ ժամանակներում Լօնդոնի աղքատների թշուառ դրութենի ակնատես լինելով ընծայեց էդ աղքատներին մօտ երկու միլիօն մանեթ: Մէկ էդքան դուանը էլ ընծայեց դա Նիւեօքքի աղքատներին: Բայց բանն էն է, որ Լօնդոնի հարուստները, զգալով Պիբօզու արած մեծազորութիւնը, ահազին ծախսեր արին դրան մեծարելու և պատելու համար, բայց ոչով չուղեցաւ հետևել նրա օրինակին և որ և իցէ կերպով օգնութիւն տալ աղքատներին:

Մոսկովի աշխարհահանդէսը 1865 թւին: 1865 թւին Մոսկովի մէջ էրած մանուֆախտուրայի աշխարհահանդիստուր միւսների հետ և էս հայերը պարգևներ ստացան:

Մեծ արծաթէ մեդալ

1.) Պատուաւոր քաղաքացի Յովհաննէս և Ալէքսանդր ԱՆԱՆՏԱՆՅՆԵՐԸ՝ կովկասի բամբակի համար:

2.) Պատուաւոր քաղաքացի Գասպար և Մակար ՄԱՄԱԶԱՆՏԱՆՅՆԵՐԸ՝ Ղըլարու զինու համար:

Փոքր արծաթէ մեդալ

1.) Մկրտիչ ՄԵԼԻԲՍԵԹԵԿԵՍՆՅՐ՝ հաղարկեցայի և մինաքրած քամարի համար: Հրասպարակական գովասանութենի արժանացան:

1.) Պատուաւոր քաղաքացի Բախչի ԽԱԼԱԹԵԱՆՅՐ՝ ապրեշտմեղէնի համար:

2.) Շամախու ընակիչ Աւաղ ԹԱՐՈՑԵԱՆՅՐ՝ թուլթուների համար:

և 3.) Յովհաննէս և Ալէքսանդր ԱՆԱՆՏԱՆՅՆԵՐԸ՝ թուլթուների համար:

ԱՌԵԻՏՐԱԿՈՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լօնդոն մայիսի 7.

Բրդի առուստուրը լաւ է և էս շաբաթ սոխարական գներից փուտին 2 1/2 պէնս (մօտ 7 կոպ.) աւելով ծախվեցաւ:

Լիվերպուլ մայիսի 6.

Բամբակի առուստուրը շատ թոյլ է: Էս տեղի Ուեկիքելդ Դաշ և ընկ. անու-

նով առուստրական տունը մօտ 7 միլիօն մանեթով կաւարացաւ միայն բամբակի առուստուրիցը:

Բերլին մայիսի 6.

«Եւրոպական» անունով բանկը կուտարացաւ: Փողի պակասորդը դեռ չէ որոշած: Էդ բանկի գումարն էր մօտ 16 միլիօն: Բիրժայի վրայ շատ հանդարտ է: Ոչինչ նշանաւոր առուստուր չէ լինում:

Պետերբուրգ մայիսի 10.

Թեպէտ էս շաբաթ կուրսերը հասան Լօնդոնի վրայ 26 պէնսին և Պարիժի վրայ 270 սանախմին, բայց հիմի յիս էլ բարձրացան:

Լօնդոնի վրայ երեք ամիս ժամանակով 26 1/4 պէնս:

Պարիժի վրայ . 271 սանախմ:

5 0/0 Լատարեյով առաջին փոխառութենի տոմսակները . . . 110 ման.

5 0/0 Լատարեյով երկրորդ փոխառութենի տոմսակները . . . 105 1/2 ման:

Ռսկին որ 8 մանեթին էր հասել, հիմի նոր դառաւ 7 մ. 60 կոպ.

Օդեսա մայիսի 6.

Մարսել և Պարիժի վրայ կուրսը — 273 սանախմ:

Թիֆլիս 1866 մայիսի 28.

Բամբակի առուստուր չկայ: 9 մանեթով չեն տալիս:

Բուրդը	—
Լեզակը	—
Ինդիգու շաքարը	10 մ. 20 կ.
Ռօինը	—
Արծաթը 72 պրօբի	60 մ.
— 84 պրօբի	300 մ.
Ոսկին	7 մ. 15 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Էս ամսի 31-ին, երեքշաբթի Թիֆլիսի թեատրումը պէտք է խաղալին Տիկին Պայծառ Յատուլճեանցի օգտի համար «Կայրին Չաւաւը» անունով թատերգութիւնը և «Երկուս էլ քաղճած ենք», երկուս էլ փող չունենք» անունով Ֆարս վօզելիլը: